ՏԵՂԵԿԱՆՔ

Ներկայացված 1-ին ցանկի վերաբերյալ, որտեղ ընդգրկվել են 2020 թվականի մարտից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներկրված այն դեղերը, որոնց գները նվազել են զուգահեռ ներմուծման շնորհիվ, հայտնում ենք, որ շուկայի գների դիտարկում Կենտրոնը չի իրականացնում, այնուամենայնիվ աղյուսակում բացակայում է նշում, թե որ գնի մասին է խոսքը՝ մեծածախ թե մանրածախ, որը կարևոր է այնքանով, որ 2020-2021թթ ընթացքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներում իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն արձանագրվել են դեպքեր, երբ **մանրածախ իրացման միջին գներն աճել են՝ անկախ այն հանգամանքից, որ տեղի է ունեցել մեծածախ իրացման միջին գների նվազում** (Եզրակացությունների 14-րդ կետ): Անհրաժեշտ է ներկայացնել գների հաշվարկը իրականացվել է մեծածախ , թե մանրածախ գներով:

Երկրորդ ցանկի հետ կապված, որում ընդգրկվել են այն դեղերը, որոնք ներկրվել են վերը նշված ժամանակաշրջանում դեֆիցիտի պատճառով, հայտնում ենք, որ դեղերի շուկայի առանձնահատկություններից է այն, որ մեծ թիվ են կազմում նույն ակտիվ բաղադրատարրը պարունակող, սակայն տարբեր ընկերությունների կողմից տարբեր առևտրային անվանումներով արտադրվող դեղերը, որոնք փոխադարձաբար փոխարինելի են, քանի որ գրանցման նախապայմաններից մեկը դեղագործական և թերապևտիկ համարժեքության հիմնավորումն է: 2022թ փետրվարի դրությամբ Հայաստանում գրանցված դեղերի ցանկում միայն ամօքսացիլին կամ ամօքսացիլինը քլավուլոնաթթվի հետ պարունակող դեղերի թիվը 42 է և, եթե ինչ-որ պատճառով, ինչ-որ ժամանակ դրանցից որևէ մեկը շուկայում ժամանակավոր բացակայում է, դա դեռևս չի նշանակում, որ առողջապահական համակարգը լուրջ խնդրի առաջ է, քանի որ այդ պահին առկա են համարժեք փոխարինողներ: Ընդ որում, ներկայացված ցանկում (որում բացակայում են դեղերի համընդհանուր անվանումները), նմանատիպ դեղերը գերակշռում են: Հարկ

է նշել, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն «Դեղերը դեղատոմսով դուրս են գրվում ըստ **դեղի համընդհանուր անվանման**: Դեղատունը դեղ ձեռք բերող անձին պարտավոր է ներկայացնել դեղատանը առկա **նույն բաղադրատարրը պարունակող, նույն դեղաչափով և դեղաձևով փոխադարձաբար փոխարինելի բոլոր դեղերի վերաբերյալ** սպառիչ տեղեկատվություն, այդ թվում՝ գների մասին՝ առանց ուղղորդման»: